Հավելված 1
ՀՀ Գեղարքունիքի մարզի
Սևան համայնքի ավագանու՝
20.04.2023թ. N 38-Լ որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Հավաքի կազմակերպչի կողմից ստացված հավաքի իրազեկման փաստաթղթերը ընդունվում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանի աշխատակազմում:
2. Հավաքի կազմակերպչի կողմից ստացված հավաքի իրազեկման փաստաթղթերը Սևանի համայնքապետարանի աշխատակազմում ընդունվելուց հետո համապատասխան աշխատակիցն այն մուտքագրում է և մտից համարը, մուտքագրման օրը, ամիսը,տարին և ժամը, հավաքի կազմակերպչի մասին տվյալները և հավաքի համառոտ բովանդակությունն նշում է հավաքների իրազեկումների գրանցամատյանում:
3. Հավաքի կազմակերպչի կողմից ստացված հավաքի իրազեկման փաստաթղթերը Սևանի համայնքապետարանի աշխատակազմում ընդունվելուց հետո Սևան համայնքի ղեկավարն անհապաղ տալիս է հանձնարարական, որպեսզի նախապատրաստվի ոստիկանություն ուղարկվող ելից գրություն հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով:
4. Ոստիկանությանը հասցեագրված հավաքի անցկացման վերաբերյալ կարծիքն ստանալու վերաբերյալ գրությունն ստորագրելուց հետո Սևանի համայնքապետարանի համապատասխան աշխատակիցը անհապաղ այն առաքում է ոստիկանություն և այդ մասին գրառում կատարում Սևանի համայնքապետարանում՝ հավաքների իրազեկումների գրանցամատյանում:
5. Ոստիկանության կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալուց հետո այդ մասին անհապաղ գրառում է կատարվում Սևանի համայնքապետարանում հավաքների իրազեկումների գրանցամատյանում:
6. Ոստիկանության կողմից հավաքի անցկացման վերաբերյալ պատասխան գրությունը Սևան համայնքի ղեկավարը մակագրում է աշխատակազմի քարտուղարին ՝ իրավական ակտի նախագիծը նախապատրաստելու համար:
7. Սևան համայնքի ղեկավարի իրավական ակտը ընդունվելուց հետո համայնքապետարանի համապատասխան աշխատակիցը անհապաղ այդ մասին գրառում է կատարում Սևանի համայնքապետարանում հավաքների իրազեկումների գրանցամատյանում, այն ուղարկվում է հավաքի կազմակերպչին և այդ մասին գրառում է կատարվում գրանցամատյանում:
8. Սևան համայնքի ղեկավարի իրավական ակտը կազմակերպչին ուղարկելուց հետո համայնքապետարանի համապատասխան աշխատակիցը հետևում է իրավական ակտի պահանջների կիրարկման ընթացքին և դրա մասին գրառում է կատարում հավաքների իրազեկումների գրանցմատյանում:

Հավելված 2
ՀՀ Գեղարքունիքի մարզի
Սևան համայնքի ավագանու՝
20.04.2023թ. N 38-Լ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Հ/Հ	Մտից համարը	Հավաքի իրազեկման փաստաթղթի մուտքագրման օրը, ամիսը, տարին, ժամը	Հավաքի կազմակերպիչը	Հավաքի համառոտ բովանդակությունը	Իրազեկումը ոստիկանություն ուղարկելու օրը, ամիսը, տարին, ժամը	Ոստիկանության կարծիքը	Ընդունված իրավական ակտը	Իրավական ակտի առաքման օրը, ամիսը, տարին, ժամը	Ծանոթություն